ՊԱՅՄԱՆԱԳԻՐ №01/031

«ՀԱԷԿ» ՓԲԸ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՔԻՄԻԿԱՏՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-145/19»

«ՊԱԷԿ» ՓԲԸ ЗАО «ААЭК» 01/031 (ՕՅՊ) Գնման ընթացակարգերի բաժին Отдел закупочных процедур

ք. Մեծամոր «04» 03 2020թ.

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ը ի դեմս գլխավոր տնօրեն Մ. Վարդանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և <<Մեդիսար>> ՍՊԸ-ը, ի դեմս տնօրեն Մանել Գաբրիելյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված քիմիկատները (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրացուցային օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրացուցային օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **2309460 (երկու միլիոն երեք հարյուր ինը հազար չորս հարյուր վաթսուն)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով գնորդի կողմից ստորագրվելուց հետո մինչև 30 օրացուցային օրվա ընթացքում՝ ներառյալ վաղաժամկետ մատակարարման դեպքերը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 7 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[20] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

---

[20] *տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:*

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին: 8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.10 Պայմանագիրը կազմված է 16 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.11 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ և ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ «ՀԱԷԿ» ՓԲԸ	ՎԱՃԱՌՈՂ «Մեդիսար» ՍՊԸ
Հասցե: ՀՀ, Արմավիրի մարզ, ք. Մեծամոր, 0910	Հասցե: ՀՀ, ք. Երևան, Գետառի 4/9
ՀՎՀՀ: 04401874	ՀՎՀՀ: 02555635
Հ/Հ: 1930000199200100	Հ/Հ: 2050022415811001
Բանկ: «Կոնվերս Բանկ» ՓԲԸ, ք. Երևան,	Բանկ: «Իսեկոբանկ» ՓԲԸ
Հեռ. (+374 10) 28-18-80, 20-04-91, 28 29 60	Հեռ.: +374 10 561127, 543079
E-mail: anpp@anpp.am	E-mail: info@medisar.am
Մ. Վարդանյան /ստորագրություն/ Կ.Տ.	Մ. Գաբրիելյան /ստորագրություն/ Կ.Տ.

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի									
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	մատակարարման		
							հասցեն	ենթակա քանակը	ժամկետը
6	24411300	Ամոնիակ լիմոնաթթվային	երկտեղակալված ԳOUS-3653-78, քիմիական մաքուր, ջրում պղինձ որոշելու համար	կգ	7000	14000	ՀՀ, Արմավիրի մարզ, ք. Մեծամոր, <<ՀԱԷԿ >> ՓԲԸ	2	Պայմանագրի կնքման օրվանից 30 օրացուցային օր
7	24411300	Ամոնիակ լիմոնաթթվային	եռտեղակալված ԳOUS-9264-59, քիմիական մաքուր, ջրում պղինձ որոշելու համար	կգ	6000	18000		3	
8	24411300	Ամոնիակ մոլիբդենաթթվային	քիմիական մաքուր, անգույն բյուրեղներ, ԳOUS-3765-78, ջրում սիլիկատները որոշելու համար	կգ	20000	50000		2.5	
11	24321300	Ածխածնի քառաքլոր	խտությունը 1,59գ/սմ³, տեխնիկական ջրային լուծույթ, փաթեթվածքը հերմետիկ ապակյա տարայով	կգ	10000	10000		1	
15	24411600	Ամոնիումի սուլֆատ	ԳOUS 3769-60, քիմիական մաքուր, ջրի կոշտությունը որոշելու համար	կգ	1500	900		0.6	
18	24321660	Ակտիվ պայծառ-երկնագույն	ԳOUS-20447-75, քիմիական մաքուր	գրամ	20	2000		100	
19	24321660	Ասկորբինաթթու	ԳOUS-4815-76, քիմիական մաքուր	գրամ	5	2500		500	
22	24311129	Ամոնիում ածխաթթվային	քիմիական մաքուր	գրամ	1.5	15000		10000	
24	33621270	Բուֆերային լուծույթ 9.18	ԳOUS-8.135-2004, ֆիկսանալ, ջրածնային ցուցիչ՝ 9.18% ցուցանիշով, տուփերով, քիմիական մաքուր, փաթեթվածքը հերմետիկ ամպուլայով 1 տուփի մեջ 10 ամպուլա, 1 ամպուլայի պարունակությունը լուծելով 1 լիտր ջրում ստացվում է 9.18 ջրածնային ցուցիչ՝ 1լ ջրում	հատ	600	6600		11	
25	33621270	Բուֆերային լուծույթ 6.86	ԳOUS-8.135-2004, Ջրածնային ցուցիչ՝ 6,86% տուփերով, 1 տուփի մեջ 10 ամպուլա	հատ	600	6600		11	
26	33621270	Բուֆերային լուծույթ 1.68	ԳOUS-8.135-2004, ջրածնային ցուցիչ՝ 1,68% տուփերով, 1 տուփի մեջ 10 ամպուլա	հատ	600	6600		11	
28	24311129	Գրիսսի ռեակտիվ	Մաքուր անալիզի համար, ТУ 6-09-3569-74	գրամ	15	4500		300	
29	24321650	Գլիցերին	ԳOUS-6259-75, քիմիական մաքուր	կգ	800	28000		35	

			յուղերում մածուցիկությունը որոշելու համար						
31	24321610	Գլյուկոզա	ԳOUS-6038-51, քիմիական մաքուր ջրային միջավայրում թթվածինը որոշելու համար	կգ	1200	1200		1	
37	24311129	Երկաթամոնիակային շիբ	Կվասցի սպիտակ փոշի, փաթեթավորած հերմետիկ տարայում:	գրամ	6	600		100	
42	24911800	Ժելատին	քիմիական մաքուր, խտությունը 1,3-1,4գ/սմ³, բաց դեղնագույն բյուրեղ	կգ	6000	600		0.1	
43	24311470	Լանտանի նիտրատ	A14890.36, քիմիական մաքուր	կգ	135000	67500		0.5	
45	24311114	Ծծմբական թթու	ԳOUS 14261-78, մաքուր վերլուծության համար	կգ	500	158000		316	
51	24311130	Կալիումի հիդրոքսիդ	ԳOUS-24363-80, քիմիական մաքուր	կգ	1200	18600		15.5	
56	33621765	Կալիումի պերմանգանատ ֆիկսանալ	ԳOUS 20490-75, կալիումի պերմանգանատի փոշի, անալիզի համար մաքուր, փաթեթվածքը հերմետիկ ամպուլայով (10 ամպուլան 1 տուփում), 1 ամպուլայի պարունակությունը լուծելով 1լ ջրում ստացվում է կալիումի պերմանգանատի 0.1N (0.1 նորմալությամբ) կոնցենտրացիայի լուծույթ: ջրային միջավայրում թթվածին, նիտրիտներ և նաֆթամթերքները որոշելու համար	սրվակ	400	20000		50	
57	24311129	Կալիումի հեքսացիանոֆերրատ K4(Fe(CN)6)3H2O	Անալիզի համար մաքուր, խտությունը 1.853գ/սմ³ , դեղին բյուրեղներ	գրամ	3	3000		1000	
67	24321660	Մեթոլ "Ա"	ԳOUS-25664-83, քիմիական մաքուր, անգույն բյուրեղներով փոշի ջրում սիլիկատները որոշելու համար	գրամ	5	5500		1100	
69	24321660	Մեթիլենային երկնագույն	ТУ 6-09-29-76, քիմիական մաքուր ջրային միջավայրում հիմնայնությունը որոշելու համար	գրամ	50	5000		100	
71	24311129	Մոռի աղ	անալիզի համար մաքուր, խտությունը 1,86գ/սմ³ կապտականաչավուն բյուրեղ	գրամ	5	550		110	
72	33621765	Մանգանաթթվական կալիում ֆիկսանալ	փաթեթվածքը հերմետիկ ամպուլայով (10 ամպուլան 1 տուփում), 1 ամպուլայի պարունակությունը լուծելով 1լ ջրում ստացվում է 0.1N (0.1 նորմալությամբ) կոնցենտրացիայի լուծույթ	սրվակ	400	8000		20	
73	33621765	Մագնեզիումի սուլֆատ ֆիկսանալ	ԳOUS 4523-77, մագնեզիումի սուլֆատի բյուրեղներ, քիմիական մաքուր, փաթեթվածքը հերմետիկ ամպուլայով (10 ամպուլան 1 տուփում), 1 ամպուլայի պարունակությունը լուծելով 1լ ջրում ստացվում է 0.1N (0.1 նորմալությամբ) կոնցենտրացիայի լուծույթ	սրվակ	450	11250		25	

			ջրային միջավայրում թթվածնի քանակը որոշելու համար						
74	24321660	Մուրեկսիդ	քիմիական մաքուր, կապույտ բյուրեղներ, փաթեթավորումը հերմետիկ տարայով	գրամ	300	30000		100	
75	24311170	Յոդ բյուրեղային	կարմրավուն բյուրեղներ, փաթեթվածքը ապակյա հերմետիկ տարայով	կգ	30000	6000		0.2	
77	33611430	Նեսլերի ռեակտիվ	ТУ 6-09-2089-77, քիմիական մաքուր	կգ	7500	232500		31	
79	24311129	Նատրիում սալիցիլաթթվային	ԳOUS 17628-72, քիմիական մաքուր, սպիտակ փոշի ջրային միջավայրում նիտրատները որոշելու համար	գրամ	8	960		120	
81	24321660	Նատրի ացետատ	ԳOUS-199-7478, քիմիական մաքուր	գրամ	1.5	1500		1000	
82	24311129	Նատրիումի հիդրոքսիդ	ԳOUS 4328-77, քիմիական մաքուր ջրային միջավայրում թթվայնություն, բոր, ամոնիում որոշելու համար	գրամ	1	3500		3500	
83	33621765	Նատրիումի հիդրոքսիդ ֆիկսանալ	ԳOUS 4328-77, նատրիումի հիդրոքսիդի ջրային լուծույթ, քիմիական մաքուր, փաթեթվածքը հերմետիկ ամպուլայով (10 ամպուլան 1 տուփում), 1 ամպուլայի պարունակությունը լուծելով 1լ ջրում ստացվում է նատրիումի հիդրոքսիդի 0.1N (0.1 նորմալությամբ) կոնցենտրացիայի լուծույթ ջրային միջավայրում թթվայնություն, բոր, ամմոնիում որոշելու համար	սրվակ	400	24000		60	
86	33621765	Նատրիումի քլորիդ ֆիկսանալ	ԳOUS 4233-77, նատրիումի քլորիդի բյուրեղներ, քիմիական մաքուր, փաթեթվածքը հերմետիկ ամպուլայով (10 ամպուլան 1 տուփում), 1 ամպուլայի պարունակությունը լուծելով 1լ ջրում ստացվում է նատրիումի քլորիդի 0.1N (0.1 նորմալությամբ) կոնցենտրացիայի լուծույթ գազերը միջավայրում որոշելու համար	սրվակ	400	13600		34	
89	24311127	Նատրիումի հիդրոկարբոնատ	քիմիական մաքուր, խտությունը 2,2գ/սմ³, սպիտակ բյուրեղ	կգ	500	1200		2.4	
93	24321660	Նիտրազինային դեղին	ԳOUS 11774-66, քիմիական մաքուր նավթամթերքների քանակը որոշելու համար	գրամ	480	48000		100	
98	33691840	Պիրագալլոլ Ա	ԳOUS-6408-75, քիմիական մաքուր ջրային միջավայրում գազերի որոշման համար	կգ	90000	1350000		15	
101	24311129	Ստրոնցիում ազոտաթթվական	քիմիական մաքուր	գրամ	7	7000		1000	
102	24321660	Սուլֆոսալիցիլային թթու	ԳOUS- 4478-78, քիմիական մաքուր, սպիտակ փոշի, փաթեթվածքը հերմետիկ տարայով, ջրային միջավայրում երկաթը որոշելու համար	գրամ	4.813665	15500		3220	

105	24321660	Սալիցիլաթթու	քիմիական մաքուր, անգույն բյուրեղներ, անալիզի համար մաքուր ԳՕՍ 5844-77	գրամ	7	350		50	
107	24321660	Տրիլոն «Բ	ԳՕՍ-10652-73, քիմիական մաքուր ջրի կոշտությունը որոշելու համար	գրամ	2.5	1250		500	
108	33621765	Տրիլոն «Բ ֆիկսանալ	Տրիլոն-Բ-ի փոշի, անալիզի համար մաքուր, փաթեթվածքը հերմետիկ ամպուլայով (10 ամպուլան 1 տուփում), 1 ամպուլայի պարունակությունը լուծելով 1լ ջրում ստացվում է Տրիլոն-Բ-ի 0.1N (0.1 նորմալությամբ) կոնցենտրացիայի լուծույթ	սրվակ	500	15000		30	
123	24311129	ֆոսֆորաթթվական նատրիում (միափոխարինված)	քիմիական մաքուր	գրամ	3	600		200	
126	24311129	Ինդիկատոր <ПАР >	բաց շագանակագույն փոշի, փաթեթվածքը հերմետիկ տարայով	գրամ	1700	85000		50	
127	38411600	Ինդիկատորային թուղթ՝ КОНГО-РОТ	կարմիր թղթե շերտեր: Փաթեթավորումը տուփով, քիմիական լուծույթում ստանալով երանգավորում, ցույց է տալիս pH միջավայրը՝ pH=3փ5,2միջակայքում	հատ	3000	6000		2	
128	38411600	Ունիվերսալ ինդիկատորային թուղթ	բաց նարնջագույն թղթե շերտեր, փաթեթավորումը տուփով: Քիմիական լուծույթում ստանալով երանգավորում, ցույց է տալիս pH միջավայրը՝ pH=0փ12 միջակայքում	հատ	1500	3000		2	

* ապրանքները պետք է արտադրված լինեն 2018թ. ոչ շուտ ունենան որակի հավաստագիր

ԳՆՈՐԴ
«ՀԱԷԿ» ՓԲԸ

Մ. Վարդանյան
/ստորագրություն/

Կ.S.

ՎԱՃԱՌՈՂ
«Մեդիսար» ՍՊԸ

Մ. Գաբրիելյան
/ստորագրություն/

Կ.S.

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
6	24411300	Ամոնիակ լիմոնաթթվային			14000	14000	14000	14000	14000	14000	14000	14000	14000	14000	**14000**
7	24411300	Ամոնիակ լիմոնաթթվային			18000	18000	18000	18000	18000	18000	18000	18000	18000	18000	**18000**
8	24411300	Ամոնիակ մոլիբդենաթթվային			50000	50000	50000	50000	50000	50000	50000	50000	50000	50000	**50000**
11	24321300	Ածխածնի քառաքլոր			10000	10000	10000	10000	10000	10000	10000	10000	10000	10000	**10000**
15	24411600	Ամոնիումի սուլֆատ			900	900	900	900	900	900	900	900	900	900	**900**
18	24321660	Ակտիվ պայծառ-երկնագույն			2000	2000	2000	2000	2000	2000	2000	2000	2000	2000	**2000**

19	24321660	Ասկորբինաթթու			2500	2500	2500	2500	2500	2500	2500	2500	2500	2500	2500
22	24311129	Ամոնիում ածխաթթվային			15000	15000	15000	15000	15000	15000	15000	15000	15000	15000	15000
24	33621270	Բուֆերային լուծույթ 9.18			6600	6600	6600	6600	6600	6600	6600	6600	6600	6600	6600
25	33621270	Բուֆերային լուծույթ 6.86			6600	6600	6600	6600	6600	6600	6600	6600	6600	6600	6600
26	33621270	Բուֆերային լուծույթ 1.68			6600	6600	6600	6600	6600	6600	6600	6600	6600	6600	6600
28	24311129	Գրիսսի ռեակտիվ			4500	4500	4500	4500	4500	4500	4500	4500	4500	4500	4500
29	24321650	Գլիցերին			28000	28000	28000	28000	28000	28000	28000	28000	28000	28000	28000
31	24321610	Գլյուկոզա			1200	1200	1200	1200	1200	1200	1200	1200	1200	1200	1200
37	24311129	Երկաթամոնիակային շիբ			600	600	600	600	600	600	600	600	600	600	600
42	24911800	Ժելատին			600	600	600	600	600	600	600	600	600	600	600
43	24311470	Լանտանի նիտրատ			67500	67500	67500	67500	67500	67500	67500	67500	67500	67500	67500
45	24311114	Ծծմբական թթու			158000	158000	158000	158000	158000	158000	158000	158000	158000	158000	158000
51	24311130	Կալիումի հիդրոքսիդ			18600	18600	18600	18600	18600	18600	18600	18600	18600	18600	18600

56	33621765	Կալիումի պերմանգանատ ֆիկսանալ			20000	20000	20000	20000	20000	20000	20000	20000	20000	20000	20000
57	24311129	Կալիումի հեքսացիանոֆերրատ K4(Fe(CN)6)3H2O			3000	3000	3000	3000	3000	3000	3000	3000	3000	3000	3000
67	24321660	Մեթոլ "Ա"			5500	5500	5500	5500	5500	5500	5500	5500	5500	5500	5500
69	24321660	Մեթիլենային երկնագույն			5000	5000	5000	5000	5000	5000	5000	5000	5000	5000	5000
71	24311129	Մոռի աղ			550	550	550	550	550	550	550	550	550	550	550
72	33621765	Մանգանաթթվական կալիում ֆիկսանալ			8000	8000	8000	8000	8000	8000	8000	8000	8000	8000	8000
73	33621765	Մագնեզիումի սուլֆատ ֆիկսանալ			11250	11250	11250	11250	11250	11250	11250	11250	11250	11250	11250
74	24321660	Մուրեկսիդ			30000	30000	30000	30000	30000	30000	30000	30000	30000	30000	30000
75	24311170	Յոդ բյուրեղային			6000	6000	6000	6000	6000	6000	6000	6000	6000	6000	6000
77	33611430	Նեսլերի ռեակտիվ			232500	232500	232500	232500	232500	232500	232500	232500	232500	232500	232500
79	24311129	Նատրիում սալիցիլաթթվային			960	960	960	960	960	960	960	960	960	960	960
81	24321660	Նատրի ացետատ			1500	1500	1500	1500	1500	1500	1500	1500	1500	1500	1500

82	24311129	Նատրիումի հիդրօքսիդ			15000	1250	350	15500	7000	135000	4800	1200	13600	24000	3500		
83	33621765	Նատրիումի հիդրօքսիդ ֆիկսանալ			15000	1250	350	15500	7000	135000	4800	1200	13600	24000	3500		
86	33621765	Նատրիումի սիլիկատ ֆիկսանալ			15000	1250	350	15500	7000	135000	4800	1200	13600	24000	3500		
89	24311127	Նատրիումի հիդրոսուլֆատ			15000	1250	350	15500	7000	135000	4800	1200	13600	24000	3500		
93	24321660	Նիտրաթթվային դեղին			15000	1250	350	15500	7000	135000	4800	1200	13600	24000	3500		
98	33691840	Պիրազոլոն Ս			15000	1250	350	15500	7000	135000	4800	1200	13600	24000	3500		
101	24311129	Սորբցիում ացետատ			15000	1250	350	15500	7000	135000	4800	1200	13600	24000	3500		
102	24321660	Սուլֆասալիցիլային թթու			15000	1250	350	15500	7000	135000	4800	1200	13600	24000	3500		
105	24321660	Սալիցիլաթթու			15000	1250	350	15500	7000	135000	4800	1200	13600	24000	3500		
107	24321660	Տիլդն «Բ»			15000	1250	350	15500	7000	135000	4800	1200	13600	24000	3500		
108	33621765	Տիլդն «Բ» ֆիկսանալ			15000	1250	350	15500	7000	135000	4800	1200	13600	24000	3500		

123	24311129	ֆոսֆորաթթվական նատրիում (միափոխարինված)			600	600	600	600	600	600	600	600	600	600	600
126	24311129	Ինդիկատոր <ПАР >			85000	85000	85000	85000	85000	85000	85000	85000	85000	85000	85000
127	38411600	Ինդիկատորային թուղթ՝ КОНГО-РОТ			6000	6000	6000	6000	6000	6000	6000	6000	6000	6000	6000
128	38411600	Ունիվերսալ ինդիկատորային թուղթ			3000	3000	3000	3000	3000	3000	3000	3000	3000	3000	3000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*
*** վճարումը կկատարվի փաստացի մատակարարված ապրանքի՝ գնորդի կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա 30 օրացուցային օրվա ընթացքում՝ ներառյալ վաղաժամկետ մատակարարման դեպքերը*

ԳՆՈՐԴ
«ՀԱԷԿ» ՓԲԸ

Մ. Վարդանյան
/ստորագրություն/

Կ.S.

ՎԱՃԱՌՈՂ
«Մեդիսար» ՍՊԸ

Մ. Գարրիելյան
/ստորագրություն/

Կ.S.